ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

27 հունիսի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

92
(2758)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՐԱՎԱՊԱՀ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԱՉՔ Է ՓԱԿՈՒՄ

Իրավապահ համակարգը աչք է փակում Դիլիջանում ՔՊ-ականների ծեծի գործով: Մասնավորապես, «Ժողովուրդ» օրաթերթը դիմել էր Գլխավոր դատախազություն՝ պարզելու, թե դատախազությունը արդյոք ընթացք տվել է Դիլիջանում ՔՊ-ականների մասնակցությամբ տեղի ունեցած ծեծի միջադեպին: Ի պատասխան մեր հարցմանը՝ հայտնեցին, որ քրեական վարույթ նախաձեռնված չէ: Հիշեցնենք, որ հունիսի 16-ին ՔՊ-ականները իրենց դիլիջանյան հավաքի ժամանակ ծեծկռտուք էին սկսել: Մեր աղբյուրները փոխանցում են, որ երբ դրսում ՔՊ-ականները հավաքվել զրուցել են, այդ ժամանակ այդ տարածքով անցնելուց է եղել Վայքի համայնքի ղեկավար Մխիթար Մաթեւոսյանը, որը հավաքված ՔՊ-ականներին չի բարեւել: Հիմնական հավաքվածները եղել են ՔՊ-ական մարզպետներն ու համայնքապետերը: Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը դիմել է Մաթեւոսյանին, թե որ անցնում է ինչու չի բարեւում: Մաթեւոսյանն էլ հայտարարել է, թե չի ուզում, չի բարեւում, ինչից հետո մարզպետն ու համայնքապետը հարձակվել են իրար վրա ու ծեծել միմյանց: Միջադեպին արդեն խառնվել է ողջ ՔՊ-ական թեւը ու ցրել «կռվարարներին»: Դիլիջանում տեղի ունեցած ծեծկռտուքի հաջորդ օրը ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Սերգեյ Բագրատյանը որոշել է հաշիվներ պարզել Արմավիրի մարզպետի հետ:

Սերգեյ Բագրատյանը համարվում է Վայքի համայնքապետ Մխիթար Մաթեւոսյանի հովանավորը, քանի որ Բագրատյանն է նրան այդ պաշտոնում երաշխավորել, նշանակել: Երբ գիշերը Բագրատյանին պատմել են, որ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանի հետ վիճաբանել է քաղաքապետ Մաթեւոսյանը, ինչի արդյունքում ծեծկռտուք է սկսվել, պատգամավոր Բագրատյանը որոշել է անձամբ գնալ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանի մոտ ու պարզել, թե ինչու է հայհոյել Վայքի համայնքապետին:

Մեր աղբյուրները փոխանցում են, որ թեժ խոսակցություն է եղել, որից հետո Բագրատյանը հեռացել է:

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորների մոտ կրկին խուճապ է. պատրաստվում են Նիկոլ Փաշինյանին ԱԺ-ում դիմավորել: Ինչպես հայտնի է, Նիկոլ Փաշինյանն այսօր կրկին գնալու է պատերազմի հանգամանքների ուսումնասիրման ԱԺ քննիչ հանձնաժողով՝ պատասխանելու հանձնաժողովի անդամների հարցերին: Բանն այն է, որ ամեն անգամ Նիկոլ Փաշինյանի՝ խորհրդարան գնալը դառնում է «մի կաթիլ մեղրի» պատմությունը. եթե մի բան այն չի լինում, դա հետագայում մեծ պատմություն է դառնում ՔՊ-ականների համար, Փաշինյանի կողմից նկատողություններ են ստանում: Հիմա էլ ՔՊ-ականները «շունչները պահած» սպասում են, որ այսօր վերջապես «պատվով» ավարտին հասցնեն Փաշինյանի՝ ԱԺ քննիչ հանձնաժողով կանչելու ծանր գործը: Նախորդ անգամ, երբ հունիսի 20-ին նա կրկին գնացել էր քննիչ հանձնաժողով, նիստին մասնակցում էին ԱԺ պաշտպանության եւ անվտանգային հարցերի մշտական հանձնաժողովի ՔՊ-ական անդամները, արտախորհրդարանական ուժերից «Ինքնիշխան Հայաստան» կուսակցության նախագահ Դավիթ Սանասարյանը եւ մի քանի փորձագետներ. ընդդիմությունն ի սկզբանե բոյկոտել է այս հանձնաժողովի աշխատանքները: Ի դեպ, Դավիթ Սանասարյանը նիստից հետո «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասել էր, որ Փաշինյանի հայտարարությունները սպառիչ չեն, շատ հարցեր բաց մնացին, ու այսօր նա պետք է մի շարք հարցերի պատասխանի: Թե որքանով սպառիչ կլինեն Փաշինյանի պատասխանները, այսօր պարզ կդառնա: Մի բան փաստ է. նախորդ անգամ էլ Նիկոլ Փաշինյանի մենախոսությունները քննիչ հանձնաժողովի նիստում հստակ ցույց տվեցին, որ այս հանձնաժողովի առաքելությունը մեկն է՝ մաքրել Նիկոլ Փաշինյանին եւ նրա իշխանությանը: Նկատենք, որ մինչ այս այդ հանձնաժողովի բոլոր նիստը գաղտնիությամբ պարուրված են եղել. միայն Փաշինյանին են հրապարակային քննում իր իսկ պատգամավորները՝ մտավախություն չունենալով, որ կարող է ռազմական գաղտնիքներ բացահայտել:

«Հայաստան» խմբակցության նախաձեռնած ժամանակավոր քննիչ հանձնաժողովը, որը պետք է զբաղվեր ԱԺ պատգամավորների կողմից թույլ տված վարքականոնների խախտման դեպքերով, մնացել է օդում կախված: Ընդդիմադիրների այս նախաձեռնության համար հիմք էր հանդիսացել հատկապես ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի մասնակցությամբ Երեւանի կենտրոնում քաղաքացուն վիրավորելու եւ նրա վրա թքելու դեպքը, ՄԻՊ թեկնածուի քննարկման ժամանակ՝ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նիստին ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանի խուլիգանական վարքագիծը, ինչպես նաեւ փետրվարի 3-ին՝ Լաչինի միջանցքի թեմայով խորհրդարանական լսումների ժամանակ ՔՊ-ական պատգամավոր Գուրգեն Արսենյանի հայտարարությունը՝ 120 հազար արցախցու համար չարժէ ռիսկի տակ դնել 3 միլիոն հայաստանցու ճակատագիրը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հանձնաժողովի ստեղծման գործընթացն այդպես էլ առաջ չի գնում: Բանն այն է, որ, նախ, ընդդիմությունն իր ներսում չի կարողանում հանձնաժողովի նախագահ գտնել: Սա էլ ամենը չէ. ՔՊ-ն է ամեն կերպ փորձում տապալել հանձնաժողովի ստեղծման գործընթացը, որեւէ կերպ համաձայնության չեն գալիս հանձնաժողովի անդամների մասով: Հավելենք, որ «ԱԺ կանոնակարգ» օրենքը սահմանում է՝ ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի անդամների թիվը սահմանվում է Ազգային ժողովի որոշմամբ, իսկ հանձնաժողովի կազմը հաստատում է Ազգային ժողովի նախագահը: Ըստ նույն օրենքի՝ հանձնաժողովում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ: Այսպիսով, այս պահի դրությամբ հանձնաժողովի ստեղծման գործընթացը փակուղում է: Չի բացառվում, որ համաձայնության չգալու պատճառով հանձնաժողովի ստեղծման նախագիծն այդպես էլ մնա թղթի վրա, իսկ եթե անգամ ձեւավորվի, անդամներ չառաջադրելու հիմքով այն չի կայանա:

ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը երկու անշարժ գույք ունի: Դրանցից մեկը Նոր Նորք համայնքում է, մյուսը՝ Կենտրոն վարչական շրջանում: Այս բնակարանը նա գնել է 2019 թվականին, եւ այն համատեղ սեփականություն է հանդիսանում: Նախարարը նաեւ 2005 թվականի արտադրության Lexus մակնիշի ավտոմեքենա ունի, որը գնել է 2011 թվականին: Բանկային հաշիվներին տարվա վերջում նա ունեցել է 1 մլն 599 հազար դրամ, իսկ կանխիկ դրամ չի ունեցել: Նրա միակ եկամուտը եղել է 21 մլն դրամը, որը նրա տարեկան աշխատավարձն է՝ որպես նախարար: Վահան Քերոբյանը նաեւ վարկեր ունի. տարվա վերջում նրա հիփոթեքի գումարի մնացորդը կազմել է 49 մլն 527 հազար դրամ, մյուս վարկերի պատճառը հայտնի չէ, վարկի մարմանն ուղղված գումարն էլ 12 մլն դրամ է կազմել:

ԶՐՈՒՅՑ

ԻՐԱՎԻՃԱԿԸ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ Է ՔՊ-ԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթը Հայաստանում ստեղծված ներքաղաքական իրավիճակի, իշխանություն-ընդդիմություն մշտական վեճերի վերաբերյալ զրուցել է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հրաչյա Հակոբյանի հետ:

-Պարոն Հակոբյան, ԱԺ-ն հերթական նիստն է հրավիրել, եւ իրավիճակը այս անգամ եւս լարվեց: Մի կողմից՝ թե՛ Հայաստանում եւ թե՛ Արցախում իրավիճակը լարված է, մյուս կողմից՝ ԱԺ-ում պատգամավորները չեն կարողանում ընդհանուր հայտարարի գալ, անվտանգային հարցերի փոխարեն վիճում են: Ի՞նչ կասեք այս մասին: Որքանո՞վ են խորհրդարանում քննարկվող այս հարցերը համապատասխանում ստեղծված անվտանգային իրավիճակին:

-Խորհրդարանում օրակարգային հարցեր պետք է քննարկվեն. կա կոնկրետ օրակարգ, բայց կան պատգամավորներ, որոնք սադրիչ գործողություններ են իրականացնում, սադրիչ արտահայտություններ են անում, որի հետեւանքով նման իրավիճակ է ստեղծվում, ինչը, այո՛, չպետք է լինի: Սակայն այդ սադրիչ արտահայտություններն ու գործողությունները «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամները չեն անում:

-Պարոն Հակոբյան, ձեր խմբակցությունը խորհրդարանում մեծամասնություն է: Չե՞ք կարծում, որ այս իրավիճակը հարթելու, խնդիրները լուծելու հիմնական պատասխանատվությունը դուք եք կրում, ժողովուրդը դրա համար է ձեզ մանդատ տվել եւ ոչ թե ԱԺ-ում վիճաբանություններ անելու, վիճակը թեժացնելու:

-Ասել՝ դուք եք պատասխանատվություն կրում, եւ մնացած խմբակցությունները թույլ տան իրենց ամեն ինչ, կարծում եմ՝ այդքան էլ արդար չէ: Մեր ընտրողը մանդատ է տվել, որպեսզի մենք այստեղ աշխատենք՝ ի շահ Հայաստանի Հանրապետության, եւ եթե իրենք կարող են ասել, որ, օրինակ, իրենց ընտրողներն էլ իրենց մանդատ են տվել, որ գան նման սադրիչ գործողություններ իրականացնեն, խրամատավորվեն, փորձեն մեզ օր ու արեւ չտալ, թող այդպես էլ անեն:

-Ձեր իշխանությունը հատկապես քննադատության կենտրոնում է հայտնվել նրա համար, որ ընտրություններից առաջ ձեր նախընտրական արշավում խուսում էիք Արցախի խնդիրների լուծման մասին, բայց հիմա եկել եք իշխանության եւ ձեր խոստացածը չեք կատարում, ասածի հակառակն եք անում: Ինչո՞վ է սա պայմանավորված:

-Մենք քարոզարշավի շրջանակներում մեր ընտրողների հետ խոսել ենք խաղաղության օրակարգի մասին եւ հասկացել ենք, որ նրանք ողջունում են խաղաղության օրակարգը, այսօր մենք գնում ենք հենց խաղաղության օրակարգով, եւ վստահաբար կարող եմ ասել, որ երկրորդ կամ հետին պլան չի մղվել արցախահայության կամ Արցախի հարցը: Մենք տեսնում ենք, թե մեր պատվիրակությունները ինչպես են բոլոր հնարավոր տեղերում բարձրացնում Արցախի ու արցախահայության հարցը:

-Բայց ի՞նչ գին է պահանջում ձեր նշած խաղաղությունը: Արդյոք ժողովուրդը մանդատ տվե՞լ է խաղաղություն հաստատելու՝ զիջումների զոհերի, կրակոցների հաշվին:

-Ի՞նչ զիջումների մասին է խոսքը: Ժողովուրդը մանդատ է տվել, որ մենք գնանք խաղաղության: Եթե կա որեւէ ուժ, որ մտածում է, որ իրենք մանդատ ունեն ժողովրդի կողմից, որ պետք է գնան նոր պատերազմների, թող գան, ԱԺ ամբիոնից կամ ցանկացած տեղից հայտարարեն այդ մասին:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ԽԱՂԱՂԱՊԱՀՆԵՐՆ ՈՒ ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՑՔԸ

«Միայն Կարմիր խաչի միջոցով հիվանդներին տեղափոխելը բացառակ հարցի լուծում չէ, որովհետեւ Կարմիր խաչը տանում է միայն ծայրահեղ ծանր վիճակում գտնվող մարդկանց, բայց այնտեղ ունենք լրջագույն խնդիրներով խրոնիկ հիվանդություն ունեցողների, արտանոթային հիվանդություններ ունեցողների»,- հունիսի 26-ին ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում նշեց ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը:

«Մարդիկ Արցախում ունեն մանկական կերի խնդիր, տակդիրի խնդիր: Այսինքն՝ ունենք հումանիտար լրջագույն ճգնաժամ, իսկ իշխանությունը զբաղված է նրանով, որ առավոտից սաղավարտներով զինված եկել է ընդդիմությանը քննադատելու անհեթեթ պատճառաբանությամբ:

Մենք ունենք լրջագույն խնդիրներ եւ ՀՀ սահմանին, եւ միջազգային հանրության հետ աշխատանքում, որ ահազանգենք, թե ինչ է կատարվում մեր երկրի շուրջ: Հայաստանի սուվերեն տարածքը վտանգված է ամեն օր՝ 24 ժամ: Մենք կարծես հարմարվել ենք Արցախի շրջափակմանը: Նույնիսկ եթե Կարմիր խաչի՝ հիվանդներին տեղափոխելը վերականգնվել է, ես դա համարում եմ, մեղմ ասած, ոչ բավարար: Դա նշանակում է 1-2 մարդ փրկել, բայց 120 հազար մարդու կյանք այսօր վտանգված է»,-ասաց նա:

Թովմասյանի խոսքով՝ ի տարբերություն աշխարհի այլ երկրների՝ ՌԴ-ն այն երկիրն է, որը երաշխավորել է նոյեմբերի 9-ի հայտարարության ստորագրումը եւ ՌԴ նախագահը ստորագրել է այն. «Իսկ հայտարարության մեջ գրված է, որ պետք է Լաչինի միջանցքը գործի անխափան, երկկողմանի, եւ դրա երաշխավորը ՌԴ-ն է: Այսինքն՝ միայն կոչ անելը այս դեպքում խիստ անբավարար է, պետք է կոնկրետ գործիքակազմերի կիրառում, խաղաղապահները պետք է ուժով բացեն այդ ճանապարհը, եւ դա պետք է անեին առաջին օրվանից, ոչ թե թողնեին, որ ադրբեջանցիները էնտեղ սկսեր դրեին, սարքեր են դրել եւ այլն: Ռուս խաղաղապահները պարտավոր են դա անել»:

ԲԱՐՁՐԱՑԵԼ Է ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանում տնտեսական ակտիվությունը բարձրացել է: «Ժողովուրդ» օրաթերթը Վիճակագրական կոմիտեից տեղեկացավ, որ 2023-ի հունվար-մայիսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Հայաստանում տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) կազմել է 12,5%: 2023-ի մայիսին 2022-ի մայիսի նկատմամբ տնտեսական ակտիվությունը եղել է 13,7 տոկոս, այսինքն՝ բարձր աճն արձանագրվել է՝ նախորդ տարվա արդեն բարձր ցուցանիշների համեմատ:

Այս տարվա առաջին հինգ ամիսներին համեմատաբար բարձր աճ է արձանագրվել առեւտրի շրջանառությունում՝ 24,5%, ծառայությունների ոլորտում՝ 19,9%, շինարարությունում՝ 16,7: Արդյունաբերության ոլորտում՝ աճը կազմել է 3%:

ՀՐԱԺԱՐՎՈՒՄ ԵՆ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼ

«Հայաքվե» նախաձեռնության լիազոր ներկայացուցիչ Արամ Պետրոսյանը երեկ հրավիրված մամուլի ասուլիսին հայտնեց, թե որ թաղապետարաններն են հրաժարվել տարածք տրամադրել իրենց ստորագրահավաքի համար, եւ ինչ իրավական գործընթաց է սկսվել:

«Հունիսի 20-ին ՀՀ ԿԸՀ-ն գրանցել է մեր նախաձեռնությունը եւ նրա լիազոր անձին, որից անմիջապես հետո՝ նույն օրը, Երեւանի բոլոր վարչական շրջաններին իմ ստորագրությամբ դիմում է ներկայացվել, որպեզի տարածք տրամադրեն:

Դա «Հանրաքվեի մասին» օրենքով է կարգավորվում: Մեզ համար զարմանալիորեն որոշ վարչական շրջաններից մերժման պատասխաններ ստացանք, մեծ մասը դեռ չի էլ պատասխանել: Որոշ վարչական շրջանների ղեկավարներ պատասխանել են, որ իրենք ազատ տարածքներ չունեն, իսկ որոշներն էլ պատասխանել են, որ Երեւանի քաղաքապետարանի իրավաբանական վարչությունից ստացել են գրավոր ցուցում, այն է՝ 2022 թվականի ավագանու ինչ-որ որոշման հիման վրա՝ իրենք չեն կարող տարածք տրամադրել:

Մեր նախաձեռնությանը մերժել են Ավան, Նոր Նորք, Կենտրոն, Նուբարաշեն, Աջափնյակ վարչական շրջանները», - նշեց նա:

Պետրոսյանը նաեւ հավելեց, որ նմանատիպ նամակներ են ստացել մի շարք համայնքներից եւս. «Սպիտակ եւ Դիլիջան համայնքներից ենք ստացել: Մի մասը պատասխանել է, որ տարածքներ չունեն: Ունենք դրական պատասխաններ Մասիս, Արարատ, Իջեւան, Աշոցք, Ալավերդի, Արմավիր, Մեղրի չարենցավան համայնքներից:

ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾԻՑ ՔԻՉ ԱՎՏՈԲՈՒՄՆԵՐ՝ ԵՐԹՈՒՂՈՒՄ

«Պլանավորվածի համեմատ՝ փաստացի երթուղի է դուրս եկել 11 տոկոսով պակաս ավտոբուս»,- Երեւանի քաղաքապետարանի գործակարգավարական հերթական նիստի ժամանակ զեկուցեց «Երեւանի ավտոբուս» ՓԲԸ տնօրենը:

Նիստը նախագահող փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանն ասաց՝ շատ վատ ցուցանիշ է, որ ավտոբուսները պլանայինից 11 տոկոսով պակաս են երթուղի դուրս գալիս: Նա նշեց, որ «Երեւանի ավտոբուս» ՓԲԸ հիմնական գործը հասարակական տրանսպորտի սպասարկումն է եւ կազմակերպումը:

«Հետեւապես, մեր գործընկերների խնդրանքները եւ ավտոբուսներն այլ ուղղությամբ օգտագործելը չի խրախուսվում, եթե մենք ունենք պլանայինից շեղումներ:

Եթե կունենանք ավելի ավտոբուսներ, այդ ժամանակ կարող ենք օգնել մեր գործընկերներին:

Բայց Երեւանում ավտոբուսների քանակը միշտ պետք է պլանայինին մոտ լինի, մնացածն արդեն ածանցյալ է: Քիչ ավտոբուս դուրս եկավ, ժամանակային ինտերվալներն ավելի մեծացավ, մարդիկ գործից ուշացան»,- ասաց նա:

ԷԿՐԱՆՆԵՐ՝ ԿԱՆԳԱՌՆԵՐՈՒՄ

«Մեզ պետք է արդեն մտածել, որ կանգառներում համապատասխան էկրաններ լինեն, որպեսզի մարդիկ իմանան՝ ավտոբուսը որտեղ է եւ քանի րոպեից կանգառում կլինի»,- հունիսի 26-ին՝ գործակարգավարական նիստի ժամանակ, ասաց Երեւանի փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Քաղաքապետի տեղակալը հանձնարարեց այս ուղղությամբ աշխատել:

Երեւանի քաղաքապետարանի տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանն էլ ներկայացրեց, որ արդեն ներդրվել է օնլայն քարտեզի վրա հանրային տրանսպորտի տեղաշարժը ֆիքսելու հավելված:

Բացի այդ, Հարությունյանը հայտնեց, որ բավական ծանր բանակցություններից հետո շաբաթ օրը գրավոր հաստատում են ստացել, որ Zhong Tong ընկերությունը պատրաստ է հավելյալ 30 ավտոբուս տալ նույն պայմանագրի շրջանակներում՝ առանց պայմանագիրը փոփոխելու, այսինքն՝ առանց հավելյալ նոր վճարի:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ԻՐԱՐԱՆՑՈՒՄ՝ ՀԱՆՈՒՆ ՓԱՇԻՆՅԱՆԻ

Երեկ մեկնարկեց ԱԺ արտահերթ նստաշրջանը: Ի սկզբանե ՔՊ-ական պատգամավորները՝ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի գլխավորությամբ, ամեն բայլի դիմում էին, որպեսզի խորհրդարանի դահլիճում միայն ներկա գտնվեին ՔՊ պատգամավորները: «Ժողովուրդ» օրաթերթը նկատեց, որ սկզբում ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը «խռովեց» ընդդիմադիրներից եւ դուրս եկավ դահլիճից, ապա ֆիչ հետո արդեն սկսեցին ՔՊ-ականները ընդդիմադիրների հետ լեզվակռվի մեջ մտնել եւ «ռեպլիկներ» անել:

Հիշեցնենք, որ երեկ՝ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արծվիկ Մինասյանի ելույթից հետո, ԱԺ-ում լարված իրավիճակ ստեղծվեց: Ելույթին արձագանքեց ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը. «Դուք Ձեր կյանքով զբաղվեք, հա, Ձեր արժանապատվությունով, Ձեր կյանքով, Ձեր արածներով. դատական նիստի ժամանակ կխոսենք դրա մասին»,-նշեց ԱԺ նախագահը: Դահլիճում նույնպես կրքերը թեժացան, պատգամավորները սկսեցին տեղից խոսել եւ «հաթաթաներ» տալ միմյանց:

Այնուհետեւ ելույթի համար ամբիոնին մոտեցավ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը, սակայն նրա ելույթը չսկսված՝ ընդհատվեց Մինասյանի, Սիմոնյանի եւ Օհանյանի՝ միմյանց հանդեպ ուղղված վիրավորանքներով:

Հայկ Կոնջորյանը միջամտեց՝ դիմելով Սեյրան Օհանյանին. «Դուք դաստիարակություն ստացե՞լ եք, լռություն, ձայնդ, առանց հավելյալ տվայտանքների»:

ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանն էլ արձագանքեց. «Պարոն Օհանյան, պատգամավորների հետ խոսում եք «Դուք»-ով»:

Կոնջորյանը նորից անդրադարձավ Օհանյանի եւ Սիմոնյանի միջեւ տեղի ունեցած խոսակցությանը. «Դահլիճի մեծ մասը չլսեց, թե Դուք ինչ ասացիք ԱԺ նախագահին: Սրիկան Դուք եք, ԱԺ նախագահին Դուք ասացիք՝ սրիկա: Սրիկան Դուք եք եւ լուռ պետք է լսեք: Պապանձվի՛ր, ձայնդ»: Հայտարարվեց ընդմիջում:

Ընդմիջումից հետո ընդդիմադիր «Պատիվ ունեմ» եւ «Հայաստան» խմբակցությունները որոշում կայացրին չմասնակցել նիստին:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ հայրենի իշխանությունները դիտավորյալ են կազմակերպել այս ամենը, քանի որ նպատակ ունեին շատ արագ ավարտել արտահերթ նստաշրջանը, որովհետեւ այսօր առավոտյան՝ ժամը 10:00-ին, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը կրկին պետք է ներկայանա 44-օրյա պատերազմի հանգամանքների վերաբերյալ ԱԺ քննիչ հանձնաժողովի՝ պատասխանելու հանձնաժողովի անդամների հարցերին:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Հայաստանը շուտով կավարտի Մարգարայում ենթակառուցվածքների կարգի բերման աշխատանքները. հայկական կողմը հուսով է, որ թուրքական կողմը եւս կդպահի երրորդ երկրների քաղաքացիների եւ դիվանագիտական անձնագիր ունեցողների համար սահմանը բացելու վերաբերյալ ձեռք բերված պայմանավորվածությունը. այս մասին ասաց Հայաստան- Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում Հայաստանի հատուկ ներկայացուցիչ, ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանը խորհրդարանական ճեպազրույցում:

«Վերջին պայմանավորվածությունը եղել է հետեւյալը, որ զբոսաշրջային սեզոնի սկզբում պետք է ցամաքային սահմանը բացվի երրորդ երկրների քաղաքացիների եւ դիվանագիտական անձնագիր ունեցող անձանց համար: Հայկական կողմն աշխատանքներ է տանում Մարգարայում համապատասխան ենթակառուցվածքները կարգի բերելու համար, շատ շուտով կավարտենք: Եվ հույս ունենք, որ թուրքական կողմը եւս կպահի պայմանավորվածությունը, եւ այս ամառվա ընթացքում պայմանավորվածությունները կիրագործվեն»,-ասաց Ռուբինյանը:

Նա վստահեցրեց, որ գործընթացը կանգնած վիճակում չէ, ինքն ըստ անհրաժեշտության խոսում է Թուրքիայի հատուկ ներկայացուցչի հետ: Այս պահին հանդիպման մասին պայմանավորվածություն չկա դեռեւս:

Անդրադառնալով դիտարկմանը, որ որոշ ժամանակ առաջ հատուկ ներկայացուցիչները բավականին ակտիվ հանդիպումներ էին ունենում, իսկ հիմա՝ ոչ, Ռուբինյանը դա բնական համարեց՝ նշելով, որ հիմա ունեն կոնկրետ պայմանավորվածություն՝ սահմանը բացելու առումով:

«Եվ շատ կարեւոր է, որ այդ պայմանավորվածությունը կյանքի կոչվի: Նման գործընթացներում, երբ վստահության դեֆիցիտ կա, շատ կարեւոր է, որ պայմանավորվածություններն իրագործվեն: Եթե իրագործվեն, վստահությունը կավելանա, եթե չիրագործվեն, բնականաբար, կպակասի»,-ասաց Ռուբինյանը:

Ավելի վաղ հայկական կողմը հայտարարել էր, որ իր կողմից աշխատանքներ է տանում Մարգարա անցակետը կահավորելու համար, կատարվում են աշխատանքներ, որպեսզի հայկական կողմը պատրաստ լինի պայմանավորվածություններն իր կողմից իրականացնելու համար:

ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ

ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՊԵՏԸ

Երեկ «Երեւանի աղբահանություն եւ սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի նոր տնօրեն նշանակվեց Բագրատ Աղաջանյանը, որը նախկինում խարդախության եւ կեղծ պաշտոնական փաստաթղթերի համար մադրկանց է խաբել ու դատապարտվել է:

Երեկ՝ քաղաքապետարանի գործակարգավարական հերթական նիստի ժամանակ, Երեւանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանը հայտարարեց, որ «Երեւանի աղբահանություն եւ սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի նոր տնօրեն է նշանակվում Բագրատ Աղաջանյանը: «Ժողովուրդ» օրաթերթը փոքրիկ հետաքննություն իրականացրեց՝ հասկանալու համար, թե ով է Աղաջանյանը. նա, ոչ ավել, ոչ պակաս, խարդախության համար դատապարտված է եղել: Խոսենք փաստերով:

Նախաքննական մարմինը 2013 թվականին Ռուբեն Գալստյանին եւ քիչ առաջ «Երեւանի աղբահանություն եւ սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի նոր տնօրեն նշանակված Բագրատ Աղաջանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (4 դրվագներով), ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (2 դրվագներով) եւ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով (6 դրվագներով) մեղադրանք է առաջադրել այն բանի համար, որ նրանք «գործով չպարզված անհայտ անձի հետ նախնական համաձայնությամբ կատարել են ուրիշի առանձնապես խոշոր չափերի գույքի հափշտակություններ եւ հափշտակությունների փորձեր խարդախության եղանակով, ինչպես նաեւ նույն կազմով նախնական համաձայնությամբ պատրաստել, իրացրել եւ օգտագործել են ակնհայտ կեղծ փաստաթղթեր»:

Այսպես, Բագրատ Աղաջանյանը 2011թ. հուլիս-օգոստոս ամիսներին փորձաշրջան է անցել ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ բաժնում, որի ընթացքում ծանոթացել է ԴԱՀԿ ծառայության աշխատանքին, մասնավորապես՝ հարկադիր աճուրդի կազմակերպման եւ անցկացման կարգին եւ պայմաններին, աճուրդի ընթացքում գործածվող փաստաթղթերին, սակայն փորձաշրջանից հետո աշխատանքի չի անցել նշված ծառայությունում: Նույն թվականի ամռանը Բագրատ Աղաջանյանը ծանոթացել եւ մտերմացել է Ռուբեն Բախշիի Գալստյանի հետ:

2012թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Ռուբեն Գալստյանը, Բագրատ Աղաջանյանը եւ գործով չպարզված անձը խարդախությամբ առանձնապես խոշոր չափերի գույքի հափշտակությունների վերաբերյալ նախնական համաձայնության են եկել եւ կատարել դերերի բաժանում. Ռուբեն Գալստյանը վստահություն ձեռք բերելու համար անշարժ գույք գնելու ցանկություն հայտնած անձանց ներկայացել է որպես ՀՀ դատական ակտերի հարկադիր ծառայությունում մեծ կապեր ունեցող անձնավորություն, իսկ Բագրատ Աղաջանյանը եւ անհայտ անձը՝ որպես նույն ծառայության աշխատակից: Խոստանալով, որ կարող են օգնել ԴԱՀԿ ծառայությունում իրականացվող հարկադիր էլեկտրոնային աճուրդով ձեռք բերելու շուկայական արժեքից էապես էժան անշարժ գույք եւ գայթակղելով նրանց, վերջիններիս վստահությունը ամրապնդելու համար իրացնելով եւ օգտագործելով նաեւ կեղծ փաստաթղթեր՝ ԴԱՀԿ ծառայության դրամարկղի մուտքի օրդերի կեղծ անդորրագրեր (այսուհետեւ՝ նաեւ մուտքի անդորրագիր) եւ բնակարանների առուվաճառքի կեղծ պայմանագրեր՝ Ռուբեն Գալստյանը, Բագրատ Աղաջանյանը եւ անհայտ անձը, խաբեությամբ եւ չարաշահելով տուժողների վստահությունը, խարդախությամբ տիրացել են նրանց առանձնապես խոշոր չափերի գումարներին, իսկ երկու դեպքում էլ չեն կարողացել հանցանքն ավարտին հասցնել իրենց կամքից անկախ հանգամանքներով:

Դրվագ 1. Այսպես, Ռուբեն Գալստյանը Բագրատ Աղաջանյանի եւ անհայտ անձի հետ համաձայնության է եկել առանձնապես խոշոր չափերի հափշտակություն կատարել խարդախության եղանակով եւ 2012թ. սեպտեմբերին տեղեկանալով, որ իր հոր ընկեր Մուշեղ Հենրիկի Բարսամյանը Երեւան քաղաքում բնակարան գնելու ցանկություն ունի Բելոռուսիայի Հանրապետությունում բնակվող փեսայի՝ Ռուբեն Գրիգորյանի համար, առաջարկել է Մ. Բարսամյանին օգնել ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության հարկադիր էլեկտրոնային աճուրդով ձեռք բերելու շուկայական արժեքից էապես էժան՝ Երեւան քաղաքի Հյուսիսային պողոտա թիվ 3 շենքի 1 եւ 1/1 հասցեի բնակարանը: ԴԱՀԿ ծառայության հարկադիր էլեկտրոնային աճուրդում գտնվող Քաջարան քաղաքի Բարիկավան թաղամասի թիվ 2 շենքի թիվ 39 բնակարանի թիվ 188996 լոտի տակ ներկայացնելով ԴԱՀԿ ծառայության աճուրդում չգտնվող եւ երբեւէ չգտնված Երեւան քաղաքի Հյուսիսային պողոտա թիվ 3 շենքի 1 եւ 1/1 հասցեի բնակարանը՝ Ռուբեն Գալստյանը Մուշեղ Բարսամյանի հետ այն 55.000 ԱՄՆ դոլարով վաճառելու վերաբերյալ համաձայնության է եկել, համակարգչով ցուցադրել բնակարանի նկարներ եւ երկու մասով՝ 18.09.2012թ. Երեւան քաղաքի Բաղրամյան պողոտայում՝ առձեռն, ապա 03.10.2012թ. «Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲ ընկերությունում իր քեռի Գայանե Լոբյանի հաշվեհամարին փոխանցում կատարելով, Մ. Բարսամյանից ստացել է 55.000 ԱՄՆ դոլար: Վերջինիս վստահությունը ձեռք բերելու համար Ռուբեն Գալստյանը շուրջ 10 օր անց վերադարձրել է նշված գումարը՝ պատճառաբանելով, թե գործը չի ստացվում, սակայն որոշակի ժամանակ՝ 2012թ. նոյեմբերին, Ռուբեն Գալստյանը կրկին հանդիպել է Մուշեղ Բարսամյանին եւ հայտնելով, թե կարճ ժամանակահատվածում վերը նշված բնակարանի առուվաճառքի գործարքը կկազմակերպի, վերջինիցս վերցրել է առանձնապես խոշոր չափերի գումար՝ 22.366.300 ՀՀ դրամին համարժեք 55.000 ԱՄՆ դոլար եւ Բագրատ Աղաջանյանի ու անհայտ անձի հետ խարդախությամբ հափշտակել այն: Այնուհետեւ՝ 22.11.2012թ. կեսօրին, Ռուբեն Գալստյանը Մուշեղ Բարսամյանի լիազորված անձին՝ Ազնիվ Կարապետյանին, տարել է ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության՝ Երեւան քաղաքի Հալաբյան 41Ա հասցեում գտնվող վարչական շենք, որտեղ՝ նշված ծառայության դրամարկղում, Ռուբեն Գալստյանը, Մուշեղ Բարսամյանի փոխարեն, Ազնիվ Կարապետյանի անվամբ վերը նշված թիվ 188996 լոտի հաշվեհամարին վճարել է 30.567 ՀՀ դրամ գումար: Նույն օրը՝ ժամը 15.09-ին, Ռուբեն Գալստյանը, նախապես փակելով իր կողմից օգտագործվող 094 51-70-20 հեռախոսահամարը, հեռախոսազանգ է կազմակերպել նշված հեռախոսահամարից Ազնիվ Կարապետյանի 094 11-01-74 հեռախոսահամարին, եւ անհայտ անձը, ներկայանալով ԴԱՀԿ ծառայության աշխատակից, Ա.Կարապետյանին իրականությանը չհամապատասխանող տեղեկություն է հայտնել ԴԱՀԿ ծառայության հարկադիր էլեկտրոնային աճուրդում շահելու մասին: Հաջորդող օրերի ընթացքում Ռուբեն Գալստյանը Մուշեղ Բարսամյանին է տվել գործով չպարզված հանգամանքներում իր, Բագրատ Աղաջանյանի եւ չպարզված անձի կողմից պատրաստված կեղծ փաստաթուղթ՝ 22.220.000 ՀՀ դրամ ԴԱՀԿ ծառայության դրամարկղի մուտքի կեղծ անդորրագիր, որից հետո՝ 2012թ. դեկտեմբերի վերջին, Ռուբեն Գալստյանը Մուշեղ Բարսամյանին է ցուցադրել գործով չպարզված հանգամանքներում իր, Բագրատ Աղաջանյանի եւ չպարզված անձի կողմից պատրաստված կեղծ փաստաթուղթ՝ ԴԱՀԿ ծառայության անունից կնքված առուվաճառքի կեղծ պայմանագիր, այն տվել ստորագրելու Ազնիվ Կարապետյանին՝ հավաստիացնելով, որ 2013թ. հունվարի 08-ին բնակարանի առուվաճառքի գործարքը կնքումը կկատարվի:

Դատաքննությամբ հետազոտված ապացույցների գնահատման արդյունքներով Դատարանն հաստատված համարեց այն, որ Բագրատ Աղաջանյանը եւ Ռուբեն Գալստյանը, նախնական համաձայնության գալով, 2012թ. սեպտեմբերից մինչեւ 2013թ. հունվարի 9-ն ընկած ժամանակահատվածում օգտագործել են իրավունք վերապահող ակնհայտ կեղծ պաշտոնական փաստաթղթեր եւ խարդախությամբ տիրացել տուժողներ Ռուբեն Գրիգորյանի (ներկայացուցիչ Մուշեղ Բարսամյան), Լաուրա Նահապետյանի, Կարեն Աբրահամյանի եւ Գեւորգ Կարապետյանի առանձնապես խոշոր չափերի գույքերին:

Բագրատ Գագիկի Աղաջանյանին ճանաչել են մեղավոր՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (4 դրվագներով) եւ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով (4 դրվագներով) նախատեսված հանցագործությունների կատարման մեջ, նրա նկատմամբ նշանակել են պատիժ՝

տուժող Ռուբեն Գրիգորյանի դրվագով՝

ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկում՝ 5 (հինգ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման,

ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով՝ տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով,

տուժող Լաուրա Նահապետյանի դրվագով՝

ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկում՝ 5 (հինգ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման,

ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով՝ տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով,

տուժող Կարեն Աբրահամյանի դրվագով՝

ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկում՝ 5 (հինգ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման,

ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով՝ տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով,

տուժող Գեւորգ Կարապետյանի դրվագով՝

ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկում՝ 5 (հինգ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման,

ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 2-րդ մասով՝ տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

Կիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասը եւ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելով՝ Բագրատ Գագիկի Աղաջանյանի նկատմամբ որպես վերջնական պատիժ նշանակել են ազատազրկում՝ 7 (յոթ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման, եւ տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի՝ 900.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

Բագրատ Աղաջանյանի պատժի կրման սկիզբը հաշվել են 2013թ. փետրվարի 9-ից:

Դատարանի 2013 թվականի այս քննությունը եւ որոշումը ունենալով՝ հարց է առաջանում՝ ինչպես է Երեւանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանը «Երեւանի աղբահանություն եւ սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը, որն ունի մոտ 5 միլիարդ բյուջե, վստահում Բագրատ Աղաջանյանին: Ի՞նչ անվտանգության երաշխիքներ կան, որ նախկինում դատապարտված Աղաջանանը նույնը չի անի «Երեւանի աղբահանություն եւ սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկում:

Նկատենք, որ նախկինում դատապարտվածը, «Հանրային ծառայությունների մասին» օրենքի 14 հոդվածի առաջին մասի համաձայն, չի կարող պաշտոն զբաղեցնել, մինչդեռ Աղաջանյանին նոր պաշտոն են տվել:

Մեր հետաքննությունը՝ Բագրատ Աղաջանյանի մասով, շարունակելի...

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 23-ից 26-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 144 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԹԱՔՑՐԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾ՝

Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Իջեւան քաղաքի նստավայրում, դատավոր Սամվել Մարդանյանի նախագահությամբ, ընթանում է Բերդ համայնքի Իծաքար գյուղի բնակիչ, 1992 թվականին ծնված Գեղամ Արթուրի Գինովյանի դատավարությունը: Նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ ՊՆ թիվ Ն զորամասի պայմանագրային զինծառայող, դասակի հրամանատար, ի պաշտոնե հնարավորություն ունենալով առնչվելու պետական եւ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների եւ փաստաթղթերի, ինչպես նաեւ ռազմական բնույթի այլ տեղեկությունների հետ, լրտեսության, օտարերկրյա պետության ներկայացուցիչներին ռազմական բնագավառում պետական, ծառայողական գաղտնիք հանդիսացող եւ ռազմական բնույթի այլ տեղեկություններ հանձնելու, թշնամական գործունեություն իրականացնելու համար օտարերկրյա հատուկ ծառայությունների ներկայացուցչին այլ օգնություն ցույց տալու եղանակներով կատարել է պետական դավաճանություն՝ի վնաս Հայաստանի Հանրապետության տարածքային անձեռնմխելիության եւ արտաքին անվտանգության: Գ. Գինովյանին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասով: Սույն հոդվածը որպես պատիժ նախատեսում է 15-20 տարի ժամկետով ազատազրկում կամ ցմահ ազատազրկում: Գ. Գինովյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Սույն քրեական գործի վերաբերյալ տեղեկատվությունը դատական տեղեկատավական «Դատալեքս» կայքում թաքցված է:

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱԿԱՍ

Տավուշի մարզի առողջապահական հիմնարկներում բժիշկ-մասնագետների պակաս է զգացվում: Մարզում բժիշկներ կան, որոնք վաղուց կենսաթոշակային տարիքի են, սակայն փոխարինող բժիշկ չլինելու պատճառով շարունակում են աշխատել: Տավուշի մարզպետարանի տվյալներով՝ Տավուշի մարզպետարանի ենթակայությամբ գործում է 21 բժշկական հաստատություն, դրանց աշխատակիցների ընդհանուր թիվը 638 է, որից կենսաթոշակի տարիքի են 96-ը: Բժիշկների պակասությունն առկա է առողջապահական հետեւյալ հիմնարկներում՝ «Իջեւանի ԲԿ» - մանկական անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ-1 հաստիք, շտապ օգնության բժիշկ-4, քիթ-կոկորդ-ականջաբան-1, «Իջեւանի ԱԱՊԿ»-ընտանեկան բժիշկ-2, «Արծվաբերդի ԱԿ» ՊՈԱԿ-մանկաբույժ-1, «Մովսեսի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-մանկաբույժ-1, «Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ- թերապեւտ-1, հեմոդիալիզի բժիշկ-1, նյարդաբան-1, սրտաբան-1, մանկաբույժ-1, վիրաբույժ-1, շտապ օգնության բժիշկ-1, «Բագրատաշենի ԳԲԱ» ՊՈԱԿ- ընտանեկան բժիշկ-1, ինչպես նաեւ 4 ընտանեկան բժիշկ-տնօրեն՝ Ներքին Կարմիրաղբյուրի, Արծվաբերդի, Խաշթառակի, Ազատամուտի ԱԱՊԿ-ներում: Սահմանամերձ մարզում նաեւ ուսուցիչների պակաս կա: Տավուշի մարզի հանրակրթական 76 դպրոցներում ընդհանուր առմամբ աշխատում են 1830 ուսուցիչ եւ ուսուցչի օգնական, բազմաթիվ ուսուցիչներ չունեն բարձրագույն մանկավարժական կրթություն: Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում առկա է ուսուցչի 27 թափուր հաստիք՝ տարբեր առարկաների գծով:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ»-Ն ՈՒ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԲՈՂՈՔՆԵՐԸ

Հայաստանի գործատուների միության նախագահ Գագիկ Մակարյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում անդրադարձել է «Վեոլիա ջուր» ընկերությանը՝ նշելով, որ վերջինս օգտվում է ստեղծված իրավիճակից, եւ մի շարք բնակավայրերում բնակիչները խմելու ենթակա ջուր չունեն: Մակարյանի խոսքով՝ պետք է հարցին լուծում տալ, ոչ թե խնդիրները գցել իրար վրա:



-Պարոն Մակարյան, երեւանցիները շատ են բողոքում «Վեոլիա ջուր» ընկերությունից: «Ժողովուրդ» օրաթերթը եղել է մի քանի հասցեներում, որտեղից եկել են բողոքները. վիճակն ահավոր է: Այս մասին ի՞նչ կասեք:

-«Վեոլիա ջուր»-ը ժամանակակից ընկերություն է: Այն ֆրանսիական կազմակերպություն է՝ներկայացված Հայաստանում: Իր գործողությունները պետք է լինեն ժամանակակից տեխնոլոգիաներով եւ այնպիսի մենեջմենթով, այնպիսի որակով, որը հարիր է նման կազմակերպությանը: Ցավոք սրտի, երբ մենք խորանում ենք կոնկրետ գործողությունների մեջ, որոնց հատկապես տնտեսվարողներն են առնչվել (տարբեր շինարարական տեխնոլոգիաների, թույլտվությունների հետ կապված), մենք տեսնում ենք, որ «Վեոլիա ջուր»-ը նման է մի կազմակերպության, որը ներկայացնում է հանրային ծառայության կարգավորման հանձնաժողովի կողմից սահմանված գները:

Ես նաեւ տեսնում եմ մեկ այլ թյուր իրավիճակ, երբ կոյուղաջուրը լցվում է տները, «Վեոլիա»-ն ասում է՝ դա քաղաքապետարանի խնդիրն է, բայց սա նաեւ այլ պետական մարմինների խնդիրն է: Առողջապահության նախարարությունը եւս պետք է արձագանքի, հայտարարություն տարածի, որ դրանք հիվանդությունների աղբյուր են: Բնակիչը մեղավոր չէ: Բնակչին հետաքրքիր է լուծումը, բնակիչը պարտավոր չէ իմանալ, թե որ հարցով որ մարմնին պիտի դիմի: Այսինքն՝ մարմինների այս անտարբերությունը շարունակում է մեզ մոտ կայուն մնալ, ցավոք սրտի, երբ մի մարմինը պատասխանատվությունը գցում է մեկ այլ մարմնի վրա, որը բերում է նման դժգոհությունների ու խնդիրների:

-Ի՞նչն է պատճառը, որ հենց այս սեզոնին են հիմնականում առաջ գալիս նման խնդիրները:

-Ամառվա շրջանում կարող են ավելանալ նաեւ ծախսերը՝ կոյուղու օգտագործման հետ, մարդկանց պահածոներ փակելու հետ կապված, ըստ այդմ՝ ավելի շատ ջուր են օգտագործում, քան ձմռանը:

Մեկ այլ պատճառ է այն, որ Երեւանում ու մարզերում շատ մեծ թափով շինարարական աշխատանքներ են իրականացվում, եւ մեր կոյուղու համակարգը չի նախատեսված այդպիսի հզորությունների համար: Եւ փոխարենը զուգահեռ պրոցեսներ գնան, ես կոչ կանեի կառավարությանը, որ պետությունը ինքը վարկավորի, որ ժամանակին կառուցվի կոյուղին, քանի որ դրանք «Վեոլիա ջուր»-ի ուժերից վեր են:

Զրուցեց ՄԱՇԱ ՄԵԼՔՈՆՅԱՆԸ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

«ԳԱԶԵԼ»-ՆԵՐԸ ԿՀԱՆՎԵՆ

Երեւան քաղաքի հասարակական տրանսպորտի բարեփոխումների շրջանակներում շարունակվում է միկրոավտոբուսային հնամաշ շարժակազմի արդիականացումը, եւ մինչեւ հուլիսի 15-ը իրականացվելու են փոփոխություններ:

Երեկ՝ քաղաքապետարանի գործակարգավարական հերթական նիստի ժամանակ, հայտարարեց Երեւանի տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանը:

Հուլիսի 1-ից կփոխարինվի 9 երթուղի, որոնցից մեկը կսպասարկվի «ՄԱՆ» մակնիշի ավտոբուսներով: Արդեն իսկ շահագործումից կհանվի 217 հնամաշ «Գազել», որը կկազմի իրականացվող բարեփոխման 60 տոկոսը:

«Հուլիսի 1-ից նոր երթուղի դուրս կգա համար 2 ավտոբուսը, որը կփոխարինի համար 1 միկրոավտոբուսին, ամբողջությամբ երթուղին կպահպանվի, կգործի միջինը 10 րոպեում, կսպասարկվի «Ժոնգտոնգ» ավտոբուսներով: 19 եւ 29 համարի միկրոավատոբուսային երթուղիներին կփոխարինի 36 ավտոբուսային երթուղին, որը գաջագործների փողոցը կկապի Արագածի փողոցին, ինչպես նաեւ՝ Կենտրոն վարչական շրջանի հետ, կգործի միջինը 10 րոպե հաճախականությամբ: Համար 25 միկրոավտուբուսային երթուղին կփոխարինվի 37 ավտոբուսային երթուղով, ամբողջությամբ երթուղին կպահպանվի, կլինեն «Ժոնգտոնգ» ավտոբուսները: 28 համարի միկրոավտոբուսի փոխարեն կսկսի գործել 40 համարի ավտոբուսային երթուղին, իրականացվել է երթուղու փոփոխություն՝ Չարենց եւ Նար-Դոս փողոցներով կգործի, կլինեն «Ժոնգտոնգ» ավտոբուսները»,- մանրամասնեց նա:

Ըստ նրա՝ հաջորդիվ համար 50 միկրոավտոբուսային երթուղին կփոխարինվի համար 50 ավտոբուսային երթուղով, միջինում կգործի 14 րոպե, «Ժոնգտոնգ» ավտոբուսներով. «75 Ա միկրոավտոբուսին կփոխարինի 75 ավտոբուսային երթուղին՝ ամբողջությամբ նոր ուղեգծով, միջինում կգործի 10 րոպե: 114 համարի միկրոավտոբուսային երթուղուն կփոխարինի համար 25 ավտոբուսը նույն ուղեգծով, կլինեն «Ժոնգտոնգ» ավտոբուսները, 12 րոպե հաճախականությամբ, համար 35 միկրոավտոբուսային երթուղուն կփոխարինի 12 ավտոբուսային երթուղով, կիրականացվի շարժակազմի ավելացում, հաճախականությունը կլինի 12 րոպե»:

Հարությունյանի խոսքով՝ հուլիսի 1-ից 41 ավտոբուսային երթուղին կսպասարկվի «ՄԱՆ» տիպի ավտոբուսներով, կդադարեցվի 34 համարի երթուղու շահագործումը, քանի որ կրկնում է 52 ավտոբուսային երթուղուն: Կդադարեցվի նաեւ համար 9 ավտոբուսային երթուղին, որին կփոխարինեն համար 5, 22, 20 երթուղիները:

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 42 ճՏՊ. 2 մարդ զոհվել է, 56-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԵԿԵՂԵՑԻ

ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ՝ «ԳԱՎԻԹ»-ԻՑ

Հունիսի սկզբին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիաք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ տեղի ունեցավ «Գավիթ» հարթակի առաջին քննարկումը:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Տեր Եսայի Քահանա Արթենյանը բացատրեց «Գավիթ» հարթակի նշանակությունը. «Միշտ այսպիսի ավանդույթ է եղել մեր եկեղեցում, որ երբ ազգի առջեւ ծառացած են եղել լրջագույն խնդիրներ եւ մարտահրավերներ, արքունիքը, ազգի հոգեւոր դասը, ժողովուրդը համախմբվել են եկեղեցու գավիթներում, քննարկել են այդ հարցերն ու ընդհանուր լուծումներ են գտել: «Գավիթ»-ը այս տրամաբանությամբ է գործելու, եւ առաքելությունն ու նպատակը մեր հասարակության ներկայացուցիչներին, քաղաքական գործիչներին, հոգեւորականներին համախմբելն է՝ քննարկելու եւ ընդհանուր լուծումներ գտնելու այն հարցերի շուրջ, որոնք մեր ազգի համար այս պահին օրհասական են: «Գավիթ»-ի հիմնական առաքելությունը սա է»:

Խոսելով «Գավիթ»-ի ակնկալիքների մասին՝ Տեր Եսային հույս է հայտնում, որ քննարկումները կլինեն շարունակական, իսկ այն հարցին, թե արդյոք գաղափարը կաշխատի, քահանա Արթենյանն ասում է, որ եթե չկա հավատքը, որ այն աշխատելու է, ապա նախաձեռնությունն էլ չէր լինի: Այսինքն՝ եթե կա նախաձեռնություն, ուրեմն կա նաեւ վստահություն, որ հարթակը կծառայի իր նպատակին, եւ լուծումներ կտրվեն շատ կարեւոր հարցերի:

ՓԼՈՒԶՄԱՆ ՎՏԱՆԳ ԿԱ

Հունիսի 26-ին ՆԳՆ փրկարար ծառայությունից հայտնեցին, որ ժամը 11:42-ին Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ էր ստացվել, որ Երեւանի Ռաֆֆու փողոցում գտնվող Սուրբ Երրորդություն եկեղեցում առկա է փլուզման վտանգ:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Սբ Երրորդություն եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Վարդան քահանա Գափոյանի հետ՝ ճշտելու դեպքի մանրամասները. «Ես ինքս եմ զանգել ԱԻՆ, որպեսզի գան եկեղեցու քիվերին՝ տանիքի շրթունքներին եղած ճաքերի հետեւանքով թուլացած եւ շարժվող քարերը հանեն, որպեսզի հանկարծ որեւէ մեկի գլխին չընկնեն, քանի որ եկեղեցին բանուկ հատվածում է, մարդիկ են գնում-գալիս: Միայն անվտանգության նկատառումներից ելնելով՝ խնդրեցինք ՆԳՆ ԱԻՆ ծառայության աշխատակիցները գան, եւ փորձենք կասեցնել հետագա վտանգը»:

Տեր Վարդանի հավաստմամբ՝ հանված քարերը եկեղեցու արտաքին տեսքին որեւէ վնաս չեն հասցրել, միայն շատ ուշադիր զննելու դեպքում կարելի է նկատել, որ այդտեղից քարեր են պակասել:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀԱՄԱԺՈՂՈՎ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԵՐ

Համաժողովը միավորել էր քաղաքական, դիվանագիտական, ակադեմիական եւ քաղաքացիական հասարակության առաջադեմ ներկայացուցիչներին՝ քննարկելու խաղաղության կառուցմանն ու կայուն զարգացմանն առնչվող կարեւոր հարցեր:

«ԱՊՐԻ Արմենիա»-ի նախագահ Լարա Սեդրակյանը բացման խոսում ներկայացրել է համաժողովի հիմնական թեզերը, Հայաստանի առջեւ ծառացած մարտահրավերներն ու դրանց դիմակայելու հնարավորությունները:

Համաժողովի առաջին հատվածում քննարկվել են Հարավային Կովկասում խաղաղության հաստատմանն ուղղված դիվանագիտական ջանքերը, ինչպես նաեւ Արցախում մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող կարեւոր հարցեր: Նշված համատեքստում մեծ արձագանք է ունեցել հատկապես Եվրոպական խորհրդարանի ֆրանսիացի պատգամավոր, ԵԽ անվտանգության եւ պաշտպանության ենթահանձնաժողովի նախագահ Նատալի Լուազոյի ելույթը: Հատկանշական է, որ համաժողովի նախօրեին Լաուզոն գտնվում էր Հայաստանում: Իր ելույթում, ի թիվս այլ հարցերի, նա անդրադարձել է Հայաստան կատարած իր այցին, խոսել ղարաբաղյան հակամարտության մասին՝ ներկայացնելով սահմանային ընդհանուր իրավիճակը:

Համաժողովին որպես բանախոս ներկա էր նաեւ Ֆրանսիայի Օ-դը-Ֆրանս շրջանային խորհրդի նախագահ Քսավիե Բերտրանը, որն ավելի վաղ՝ սույն թվականի մայիսին, ժամանել էր Հայաստան եւ մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպումների ժամանակ քննարկել էր ղարաբաղյան հակամարտության հետ կապված հարցերը՝ շեշտելով ինքնորոշման իրավունքի իրացման կարեւորությունը: Համաժողովի առաջին հատվածում ելույթներով հանդես են եկել նաեւ France24-ում միջազգային հարաբերությունների հարցով մեկնաբան Աղմել Շաղյեն, Սորբոնի համալսարանի միջազգային հարաբերությունների եւ ԵՄ ուսումնասիրությունների գծով դոցենտ Լոռ Դելքուռը, «ԱՊՐԻ Արմենիա»-ի ավագ գիտաշխատող Բենիամին Պողոսյանը, Իսպանիայի արտաքին գործերի նախկին նախարար, Փարիզի միջազգային հարաբերությունների դպրոցի դեկան Արանչա Գոնսալես Լայան, Ուկրաինայում Ֆրանսիայի նախկին դեսպան, ԵԱՀԿ Մինսկի խմբի նախկին համանախագահ, դեսպան Ժակ Ֆորը եւ այլք:

Համաժողովի երկրորդ մասում հնչած ելույթների ժամանակ շեշտը դրվել է Հայաստանում կայուն գյուղատնտեսության, տրանսֆորմացիոն տեխնոլոգիաների եւ էկոհամակարգի կողմից ընձեռվող հնարավորությունների մեծացման հեռանկարի վրա: Մի շարք հայ ձեռնարկություններ («Նաիրիան» մաշկի խնամքի միջոցների հիմնադիր Անահիտ Մարկոսյան, «Ջուլալ» ընկերության հիմնադիր Էյմի Քեուշգուերյան, «ԱրմԱս» գինեգործարանի գործադիր տնօրեն եւ համահիմնադիր Վիկտորյա Ասլանյան եւ այլք) կիսվել են իրենց փորձով եւ ներկայացրել հաջողության հասնելու բանաձեւը: Նրանք կոնկրետ ծրագրերով մատնանշել են, թե ինչպես են իրենց գործունեությամբ ուժեղացնում Հայաստանի տնտեսական եւ բիզնես հնարավորություններն ու էկոհամակարգերը ավելի դիմակայուն երկիր կառուցելու համար:

Համաժողովում ելույթով հանդես է եկել նաեւ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ Գեւորգ Մանթաշյանը՝ խոսելով մասնավորապես ոլորտում առկա հնարավորությունների, Հայաստանի մրցունակությունն ապահովելու եւ ապագայի երկիր ստեղծելու իրենց ջանքերի մասին:

«ԱՊՐԻ Արմենիա»-ի փոխնախագահ Անահիտ Փիլիպոսյանը, ամփոփելով համաժողովի աշխատանքները, հանդես է եկել համապատասխան կոչով՝ գործնական քայլեր ձեռնարկել՝ հայկական սփյուռքն ավելի ակտիվորեն ներգրավվի նորարարական լուծումների վրա հիմված Հայաստանի կառուցման աշխատանքներում՝ հաշվի առնելով աշխարհաքաղաքական ներկայիս պայմանները:

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

ՉԵՆ ԱՃԽԱՏԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Դպրոցներում դեռեւս մնացել են 1300 ուսուցիչներ, որոնք տարբեր հանգամանքների բերումով չունեն բարձրագույն կրթություն. Ազգային ժողովի արտահերթ նիստին այս մասին ասաց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը՝ ներկայացնելով «Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին նախագիծը:

«Շուրջ 12 տարի առաջ «Հանրակրթության մասին» օրենքով պետությունը ուսուցիչների համար սահմանել է պահանջ, որպեսզի նրանք պարտադիր ունենան բարձրագույն կրթություն: Եվ տրվել է որոշակի ժամանակահատված՝ դպրոցներում գործող ուսուցիչներին սովորելու եւ ձեռք բերելու բարձրագույն կրթություն: Բազմաթիվ ուսուցիչներ գնացել են այս ճանապարհով, սակայն մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ համակարգում դեռեւս մնացել են 1300-ից ավելի ուսուցիչներ, որոնք միջին մասնագիտական կրթություն ունեն եւ շարունակում են աշխատել դպրոցներում: Այս անձինք այլեւս չեն կարողանալու աշխատել մեր դպրոցներում՝ այս տարվա օգոստոսի 20-ից սկսած»,- ասաց Անդրեասյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ ուսուցիչների մոտ եղել են տարբեր հանգամանքներ, այդ թվում՝ օբյեկտիվ, բարձրագույն կրթություն չստանալու տեսանկյունից, ԿԳՄՍ նախարարն ասաց, որ նախագծով առաջարկում են նրանց ընձեռնել հնարավորություն մասնակցելու կամավոր ատեստավորման գործընթացին:

«Եթե այդ գործընթացները տվյալ ուսուցիչները անցնեն հաջողությամբ, նրանց կտրվի հնարավորություն շարունակելու իրենց ուսուցչական գործունեությունը»,- եզրափակեց Անդրեասյանը:

ՄԵԽԱՆԻԶՄ՝ ՀԱՍՏԻՔՆԵՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Կրթական ոլորտում շարունակում է խնդրահարույց մնալ ուսուցիչների թափուր տեղերի համալրման գործընթացը. Ազգային ժողովի արտահերթ նիստին այս մասին ասաց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը՝ ներկայացնելով «Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին նախագիծը:

Նախարարի խոսքով՝ նախագծով առաջարկում է միանգամից երկու մեխանիզմ, որոնք պետք է օգնեն ուսուցիչների թափուր տեղերի պակասի լրացմանը:

«Առաջինը՝ ուսուցիչների գործուղման հնարավորության ընդլայնումն է: Առաջարկում ենք, սահմանամերձ եւ բարձր լեռնային գոտիներից զատ, այլ մարզերի բնակավայրեր եւս գործուղելու հնարավորություն տալ ուսուցիչներին, ինչը թույլ կտա ավելի արդյունավետ կազմակերպել ուսուցիչների թափուր տեղերի համալրման գործընթացը:

Երկրորդն՝ առաջարկում ենք մանկավարժի որակավորում ստանալու ծրագրով սովորող ուսանողներին (իրենց կրթության վերջին տարում) գյուղական դպրոցներում դասավանդելու հնարավորություն տալ՝ ուղեկցող ուսուցչի առաջնորդությամբ: Սա կլինի լավ պրակտիկա ուսուցիչ դառնալ ցանկացողների համար եւ թույլ կտա նաեւ դպրոցներում ապահովել այն առարկաների դասավանդումը, որոնց ապահովումն այս պահին խնդիր է»,- ասաց Անդրեասյանը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻ ՀԱՅՏԱԳՐՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ հունիսի 27-ին Հայաստանում կմեկնարկի ՀՀ պետական հանրակրթական դպրոցներում առաջին դասարանցիների հայտագրման երկրորդ գործընթացը, որը կիրականացվի 3 փուլով:

Այս տարի եւս հայտագրման գործընթացն իրականացվելու է ԿԳՄՍ նախարարության «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից վարվող «Սովորողներին դպրոց հայտագրելու էլեկտրոնային համակարգ»-ի (hayt.emis.am, haytru.emis.am) միջոցով:

Երկրորդ փուլով հունիսի 27-ից առաջին դասարանցիների հայտագրման գործընթացը կիրականացվի ընդհանուր հիմունքներով՝ հայերենով ուսուցում իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների բոլոր առաջին դասարանցիների ընդունելության համար:

Իսկ, ահա, երրորդ փուլով հուլիսի 4-ից հայտագրում կիրականացվի նաեւ օտարերկրյա քաղաքացիների, երկքաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (նրանց օրինական ներկայացուցչի) համար: Այն դեպքում, երբ ծնողներից մեկը թվարկված որեւէ խմբի ներկայացուցիչ է, իսկ մյուսը՝ ՀՀ քաղաքացի, հայտագրումը կարող է կատարվել ծնողի ընտրությամբ՝ ռուսերենով ուսուցմամբ դասարաններում:

Ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ընդգրկումը դպրոց կատարվում է սովորողի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող դպրոցում (դասարանում), իսկ դրա բացակայության դեպքում ուսուցման լեզվի ընտրությունը կատարում է սովորողի ծնողը:

Հայտագրումը կշարունակվի ողջ ուսումնական տարվա ընթացքում:

Նշենք, որ երկյակ, եռյակ, քառյակ եւ ավելի երեխաներից առնվազն մեկի հայտագրումը որեւէ հանրակրթական ուսումնական հաստատությունում ապահովում է մյուս երեխաների ընդունելությունը նույն հաստատություն՝ անկախ լիցենզիայով տրված տեղերի սահմանափակումից:

Հավելենք, որ, որպես հայտագրման առաջին քայլ, նախ պետք է ստուգել երեխայի տվյալների ամբողջականությունը: Այս նպատակով ԿՏԱԿ-ը գործարկել է https://stugum.emis.am/ կայքը, որտեղ դպրոց ընդունվող երեխայի ծնողները կարող են ստուգել երեխայի անձնական տվյալների առկայությունն ու ճշգրտությունը: Այս քայլն անհրաժեշտ է բուն հայտագրման գործընթացը սկսելու եւ հնարավոր խնդիրներից խուսափելու համար:

Լ. Ե.

ԱՊՕՐԻՆԻ

ԿԵՆՏՐՈՆԻ ԹԱՂԱՊԵՏԻ ԱՆԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

2019 թվականի մարտի 13-ից Երեւանի Կենտրոն վարչական շրջանի նախկին ղեկավար Վիկտոր Մնացականյանի նախաձեռնությամբ աղամոնտաժվեցին Օղերայի հարակից տարածքում ապօրինի կառուցված արճարանները:

Այսօր Երեւանի Կենտրոն վարչական շրջանի ներկա ղեկավար Սամվել Ղուկասյանը ոչ միայն մոռացել է Կենտրոնի բնակիչների հոգսերը, այլեւ չի հետաքրքրվում այն սրճարաններով, որոնք ապօրինի կեպրով զբաղեցնում են կանաչ գազոնը:

«Ժողովուրդ» օրաթերթն այս առնչությամբ փորձեց կապ հաստատել Կենտրոնի վարչական շրջանի ղեկավար Սամվել Ղուկասյանի հետ, սակայն մեր զանգերն այդպես էլ մնացին անպատասխան:

Փաստորեն, ստացվում է, որ Կենտրոն վարչական շրջանի ներկա ղեկավար Ղուկասյանը, նշանակվելով նման կարեւոր պաշտոնի, չի կարողանում արդեն իսկ սկսված գործընթացը շարունակել եւ լուծում տալ նման կարեւոր հարցին:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՍՊԵՐՑՅԱՆԸ՝ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԽԱՂԱՑՈՂ

Հայաստանի հավաքականի կիսապաշտպան Էդուարդ Սպերցյանը ճանաչվել է «Կրասնոդարի» լավագույն խաղացող ավարտված մրցաշրջանում: Քվեարկությունն անցկացվել է ռուսական ակումբի կայքում: Հայ ֆուտբոլիստը երկրորդ տարի անընդմեջ է արժանանում «Կրասնոդարի» լավագույն խաղացողի կոչմանը՝ երկրպագուների վարկածով. հաղորդում է ակումբի կայքը: Էդուարդ Սպերցյանը ստացել է քվեարկության մասնակիցների ձայների 48,78 տոկոսը: Ռուսաստանի ավարտված առաջնությունում Էդուարդ Սպերցյանը մասնակցել է 28 հանդիպման, խփել 10 գոլ, կատարել 12 գոլային փոխանցում. լավագույնն է այս ցուցանիշով:

Ռուսաստանի գավաթի 13 խաղում Սպերցյանը խփել է 4 գոլ, կատարել 2 գոլային փոխանցում:

Երկրորդ տեղը զբաղեցրած կոլումբացի հարձակվող Ջոն Կորդոբան ստացել է ձայների 19 տոկոսը:

ԲԱՐԵԼԱՎԵԼ Է ԴԻՐՔԵՐԸ

Թենիսի կանանց ասոցիացիան (WTA) հրապարակել է դասակարգման ամենշաբաթյա աղյուսակը:

Ռուսաստանցի Էլինա Ավանեսյանը 81-րդ տեղից բարձրացել է 64-րդ տեղ:

Դասակարգման առաջատարը լեհ Իգա Շվյոնտեկն է:

WTA, հունիսի 26

1 (1). Իգա Շվյոնտեկ (Լեհաստան)՝ 8940 միավոր
2 (2). Արինա Սաբալենկա (Բելառուս)՝ 8066
3 (3). Ելենա Ռիբակինա (Ղազախստան)՝ 5090
4 (5). Ջեսիկա Պեգուլա (ԱՄՆ)՝ 4905
5 (4). Կարոլին Գարսիա (Ֆրանսիա)՝ 4845
6 (6). Օնս Ժաբեր (Թունիս)՝ 3492
7 (7). Կորի Գաուֆ (ԱՄՆ)՝ 3305
8 (8). Մարիա Սակարի (Հունաստան)՝ 3301
9 (9). Պետրա Կվիտովա (Չեխիա)՝ 3101
10 (12). Բարբորա Կրեյչիկովա (Չեխիա)՝ 2830

ՄԲԱՊԵԻ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԸ

Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ի 24-ամյա ֆրանսիացի հարձակվող Կիլիան Մբապեն Մադրիդի «Ռեալ» տեղափոխվելու դեպքում նոր թիմում կարող է վաստակել տարեկան մոտ 60 միլիոն եվրո. հաղորդում է El Debate-ը: Այդ գումարը կձեւավորվի աշխատավարձից եւ իմիջային ու գովազդային իրավունքներից ստացած եկամուտից: Որոշ տվյալներով՝ Մբապեի մայրը մի քանի ամիս առաջ արդեն սկսել է բանակցություններն Արքայական ակումբի հետ: Սպասվում է, որ Մբապեի տրանսֆերը տեղի կունենա հաջորդ ամիս: Ֆուտբոլիստը չի ցանկանում նախապատրաստական փուլը սկսել ՊՍԺ-ի հետ: Փարիզյան թիմը արձակուրդից կվերադառնա հուլիսի 15-ին: ՊՍԺ-ն Մբապեի տրանսֆերից ակնկալում է 180-200 միլիոն եվրո:

● *Հունիսի 28-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Շերշե լա ֆամ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2000-5000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՞Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ

ԵԿԱՄՈՒՏ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է կատարվում եկամտահարկի վերադարձը:

Սիմա Բաղդասարյան (29 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Վարկառուին /համավարկառուներին/ եկամտային հարկի վերադարձը գանձապետարանը իրականացնում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ուղեկցող գրությունը (որով ներկայացվում է վճարման հանձնարարականը) ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հարկ ենք համարում նշել, որ հիմնականում վերադարձն իրականացվում է վերոնշյալ գրությունը գանձապետարան մուտքագրման օրը կամ հաջորդ աշխատանքային օրը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ գրությունը ստացվել է բանկային օրվա ավարտից հետո:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. ԵՊՀ-ում ասպիրանտուրայի ընդունելությունը ե՞րբ է կատարվում:

Աննա Առաքելյան (33 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հեռակա ուսուցմամբ (անվճար եւ վճարովի հիմունքներով) ասպիրանտուրայի ընդունելությունը սովորաբար կազմակերպվում է ընթացիկ տարվա օգոստոս-սեպտեմբեր ամիսներին:

Երեւանի պետական համալսարան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրա ընդունվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ընդունման եւ մասնագիտական քննության անցկացման հստակ ժամկետները, ինչպես առկա ուսուցմամբ ասպիրանտուրայի դեպքում, ԵՊՀ-ն ներկայացնում է դիմորդներին ՀՀ ԿԳՄՍՆ սահմանած ժամանակացույցը ստանալուց հետո՝ տարածելով համապատասխան հայտարարություն(ներ):

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Իսպանացի սերիական ռեկորդակիրն իր անվանը նոր տիտղոս ավելացրեց՝ 100-մետրանոց մրցուղին վազելով բարձրակրունկ կոշիկներով:

34-ամյա Քրիստիան Ռոբերտո Լոպես Ռոդրիգեսը 2,76 մատնաչափ բարձրության կրունկներով 100 մետրը վազել է 12,82 վայրկյանում:

Ռոդրիգեսը շրջանցել է Անդրե Օրտոլֆի ռեկորդը, որը 2019 թվականին բարձրակրունկ կոշիկներով 100 մետրը վազել էր 14,02 վայրկյանում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+10 +15	+19 +23
Կոտայքի լեռներ	+10 +14	+20 +22
Կոտայքի նախալեռներ	+15 +18	+27 +30
Գեղարքունիք	+10 +14	+20 +24
Լոռի	+11 +16	+20 +25
Տավուշ	+16 +20	+23 +28
Արագածոտնի լեռներ	+9 +13	+18 +21
Արագածոտնի նախալեռներ	+15 +18	+26 +31
Արարատ	+18 +20	+32 +34
Արմավիր	+16 +20	+31 +33
Վայոց ձորի լեռներ	+10 +13	+23 +26
Վայոց ձորի նախալեռներ	+18 +21	+33 +35
Սյունիքի հովիտներ	+19 +24	+30 +35
Սյունիքի նախալեռներ	+13 +17	+24 +28
Արցախ	+18 +21	+28 +33
Երեւան	+18 +20	+31 +33

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **26.6.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*